

Իռլանդական փիլիսոփայութիւն:

Կեանքում անհանգստանալու միայն երկու բան կայ – կամ դուք առողջ էք, կամ՝ հիւանդ: Եթէ դուք առողջ էք, ապա անհանգստանալու առիթ չկայ: Բայց եթէ դուք հիւանդ էք, ապա միայն երկու բանի մասին կարելի է անհանգստանալ՝ կամ դուք կ'առողջանաք, կամ՝ կը մահանաք: Եթէ դուք առողջանում էք, ապա անհանգստութեան ոչ մի առիթ չկայ: Եթէ դուք մահանում էք, ապա միայն երկու բանի մասին կարելի է անհանգստանալ՝ կամ դուք կ'ընկնէք դրախտ, կամ՝ դժոխք: Եթէ դուք ընկնում էք դրախտ, ապա անհանգստութեան ոչ մի առիթ չկայ: Բայց եթէ դուք ընկնում էք դժոխք, դուք այնքան զբաղուած էք լինում ձեր հին ընկերներին բարեւելով, որ ժամանակ չէք ունենում ոչնչի մասին անհանգստանալու:

**Կեանքի դասեր Նոյեան Տապանից
(անյայտ հեղինակ)**

1. Բաց մի թողէք նաւը:
2. Յիշէք, որ մենք բոլորս նոյն նաւի վրայ ենք:
3. Պլանաւորէք ձեր ապագան - դեռեւս անձրեւ չէր գալիս, երբ Նոյը կառուցեց իր տապանը:
4. Եղէք պատրաստ - վեց հարիւր տարեկանում ինչ որ մէկը կարող է ձեզ խնդրի ինչ որ կարելոր բան անել:
5. Մի լսէք քննադատներին: Պարզապէս լծուէք այն գործին, որը պէտք է կատարուի:
6. Կառուցէք ձեր ապագան ջրից բարձրադիր վայրում:
7. Անվտանգութեան համար ճանապարհորդէք գոյգերով:
8. Արագութիւնը միշտ չէ որ առաւելութիւն է - խխունջները հեպարդների հետ էին նաւի վրա:
9. Երբ դուք լարուած էք, մի քիչ հանգչէք:
Յիշէք, որ Տապանը կառուցուել է դելիտանտների կողմից, իսկ Տիտանիկը՝ պրոֆեսիոնալների:

Հին անգլեական աղօթք

Տուր մեզ, Տէր, մի քիչ արեւ,
Մի քիչ էլ գործ ու զուարճանք,
Տուր մեզ նաեւ մեր օրուայ հաց, Ու մի քիչ կարագ,
Որ կեանքի փորձանքներին դիմանանք
Տուր առողջութիւն, որ մեր ապրուստը վաստակենք,
Եւ մի քիչ աւելին, որ ուրիշներին օգնենք:

Տուր մեզ նաեւ վէպ ու գիրք,
Եւ մի քիչ էլ երգ,
որ մեր օրերը հետաքրքիր անցկացնենք:

Տուր մեզ, Աստուած, հնարաւորութիւն, որ լինենք բարի, քաջ, ազատ եւ
իմաստուն,

մեր լաւագոյնը նուիրելու ուրիշներին,
մինչեւ մարդիկ սովորեն ապրել եղբօր պէս միասին:
Ամէն: